Հավելված

ՀՀ պաշտպանության նախարարի

«07» դեկտեմբերի 2020թ. N 1169-Լ հրամանի

ԿԱՐԳ

ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ՀԱՄԱՐ ՊԱՀՊԱՆՎԱԾ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՎՃԱՐԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են գերության մեջ գտնվելու հիմքով զինվորական պաշտոնից ազատված և կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնված պայմանագրային զինծառայողի (այսուհետ՝ գերության մեջ գտնվող զինծառայող) համար պահպանված պաշտոնային դրույքաչափն այդ զինծառայողի ընտանիքին վճարելու գործընթացի հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի գործողությունը տարածվում է գերության մեջ գտնվող այն զինծառայողի վրա, որի վերաբերյալ առկա են ակնհայտ և հավաստի տվյալներ, որ գերության մեջ հայտնվելը զինծառայողի՝ զորամասը կամ ծառայության վայրը կամ մարտադաշտն ինքնակամ թողնելու և (կամ) կամովին գերի հանձնվելու հետևանք չէ, կամ եթե առկա չէ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 382-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված քրեական վարույթ:

3. Սույն կարգի 2-րդ կետում նշված տվյալները հստակեցվում են զինծառայողին զինվորական պաշտոնից ազատելու և կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնելու հրամանն արձակած իրավասու պետին ենթակա կադրային ստորաբաժանման կողմից՝ գերության մեջ գտնվող զինծառայողի ծառայության վերջին զորամաս և (կամ) քրեական վարույթ իրականացնող մարմնին, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 382-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված քրեական վարույթի առկայության մասին տեղեկատվություն ստանալու նպատակով քրեական վարույթ իրականացնող մարմնին կատարված գրավոր հարցման միջոցով: Գրավոր հարցումը ստանալու օրվանից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում զորամասի կողմից սահմանված կարգով անցկացվում է ծառայողական քննություն և դրա արդյունքների վերաբերյալ մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացվում է հարցումը կատարած կադրային ստորաբաժանմանը:

4. Ծառայողական քննության արդյունքները զորամասից և (կամ) համապատասխան հարցման պատասխանը քրեական վարույթ իրականացնող մարմնից ստանալու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում կադրային ստորաբաժանումը դրանք ներկայացնում է իրավասու ֆինանսական ստորաբաժանում: Ընդ որում, եթե ստացված տվյալների և տեղեկատվության համաձայն գերության մեջ գտնվող զինծառայողի պաշտոնային դրույքաչափն օրենքի պահանջների հիման վրա չի կարող պահպանվել և վճարվել, ապա կադրային ստորաբաժանման կողմից այդ մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացվում է նաև գերության մեջ գտնվող զինծառայողի՝ սույն կարգի 6-րդ կետում նախատեսված ընտանիքի անդամներից որևէ մեկին: Ստացված տվյալների և տեղեկատվության համաձայն գերության մեջ գտնվող զինծառայողի պաշտոնային դրույքաչափը պահպանելու և վճարելու՝ օրենքով սահմանված խոչընդոտների բացակայության դեպքում, կադրային ստորաբաժանման կողմից ֆինանսական ստորաբաժանմանն են փոխանցվում նաև գերության մեջ գտնվող զինծառայողի՝ սույն կարգի 6-րդ կետում նախատեսված ընտանիքի անդամների վերաբերյալ կադրային ստորաբաժանումում առկա կոնտակտային տվյալները, անհրաժեշտության դեպքում դրանք ճշտելու նպատակով հարցում կատարելով գերության մեջ գտնվող զինծառայողի նախկին զորամաս կամ նրա զինվորական հաշվառման վայրի տարածքային ստորաբաժանում:

5. Սույն կարգի 4-րդ կետի համաձայն գերության մեջ գտնվող զինծառայողի պաշտոնային դրույքաչափը պահպանելու և վճարելու մասին տվյալներն ու տեղեկատվությունը ստանալու օրվանից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ֆինանսական ստորաբաժանումը գերության մեջ գտնվող զինծառայողի՝ սույն կարգի 6-րդ կետում նախատեսված ընտանիքի անդամներից որևէ մեկին բանավոր կամ գրավոր առաջարկում է ներկայացնել ֆինանսական ստորաբաժանման ղեկավարի անունով դիմում՝ գերության մեջ գտնվող զինծառայողի պահպանված պաշտոնային դրույքաչափը վճարելու մասին: Դիմումում նշվում է նաև գերության մեջ գտնվող զինծառայողի ընտանիքի անդամի ազգակցական կապը և այն հաշվեհամարը, որին պետք է փոխանցվի պաշտոնային դրույքաչափը: Դիմումը կարող է ներկայացվել անձամբ կամ էլեկտրոնային եղանակով կամ գերության մեջ գտնվող զինծառայողի նախկին զորամասի կամ դիմումատուի բնակության վայրի ՊՆ զորակոչային և զորահավաքային

համալրման ծառայության տարածքային ստորաբաժանման միջոցով: Դիմումի հետ միասին ներկայացվում են նաև գերության մեջ գտնվող զինծառայողի հետ ազգակցական կապը և դիմումատուի անձը հաստատող փաստաթղթերի պատճենները, դիմումատուի անվամբ իր կողմից նախընտրած բանկում բացված կամ գործող հաշվեհամարի մասին բանկի կողմից տրված տեղեկանքը:

6. Սույն կարգի կիրառման իմաստով ընտանիքի անդամ են համարվում գերության մեջ գտնվող զինծառայողի՝

1) ամուսինը (կինը),

2) 14 տարեկան և մեծ զավակը,

3) մինչև 14 տարեկան զավակի խնամքով զբաղվող անձը,

4) ծնողները, եթե գերության մեջ գտնվող զինծառայողն ամուսնացած չէ կամ չունի զավակ:

7. Սույն կարգի 5-րդ կետի համաձայն գերության մեջ գտնվող զինծառայողի պահպանված պաշտոնային դրույքաչափի վճարումն իրականացվում է պայմանագրային զինծառայողների դրամական ապահովության հաշվարկման համար սահմանված կարգով և գերության մեջ գտնվող զինծառայողին կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնելու՝ օրենքով սահմանված ժամանակահատվածում:

8. Գերության մեջ գտնվող զինծառայողի պահպանված պաշտոնային դրույքաչափը վճարվելու ենթակա՝ սույն կարգի 6-րդ կետում նախատեսված ընտանիքի անդամների բացակայության դեպքում, պաշտոնային դրույքաչափը սահմանված կարգով դեպոնացվում է և դրա հետագա տնօրինումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով: